«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆԻ ՏՆՕՐԵՆ
Ա. ՍԱՐԳՍՅԱՆ
_____
06. հունիսի 2023թ.

ԿԱՐԾԻՔ

ՌՈԻԶԱՆՆԱ ՍԼԱՎԻԿԻ ԺԱՄԿՈՅՅԱՆԻ

«ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԵՎ ԱՆՁՆԱՅԻՆ ՈՐՈՇ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ՝ ԱՆՁԻ ՀԱՍՈՒՆԱՑՄԱՆ ՏԱՐԲԵՐ ՓՈՒԼԵՐՈՒՄ»

ԺԹ. 00.01. Հոգեբանության տեսություն և պատմություն մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Մարդկության զարգացման ներկա փուլում, երբ առկա են սոցիալ-տնտեսական, սոցիալ-քաղաքական աննախադեպ իրողություններ, համաշխարհային հանրակցության ճգնաժամ, խոշորամասշտաբ տարաբնույթ փոփոխություններ, անձի հոգեբանական ռեսուրսների և ադապտացիոն ներուժի ձևավորման, պահպանման և ամրակայման հիմնախնդիրները դառնում են օրակարգային:

Անձի հասունության տարբեր փուլերում ադապտացիայի, հոգեբանական պաշտպանական մեխանիզմների, սթրեսադիմացկունության, կոմունիկատիվ հմտությունների ամրակայման հիմնախնդիրներն այսօր արդիական են աշխարհի ժողովուրդների համար:

Նման իրադրության մեջ հոգեբանական գիտակարգի առաջնահերթ խնդիրներից է հոգեբանական պաշտպանական մեխանիզմների և անձնային որոշ բնութագրերի փոխհարաբերությունների դինամիկայի ուսումնասիրությունն՝ անձի հասունության տարբեր փուլերում, ինչպես նաև բացահայտել և՛ դեռահասների և՛ 22-25 տարեկանների պաշտպանական մեխանիզմների համակարգն, անձնային կառույցների, հատկությունների և պաշտպանական առանձին մեխանիզմների համահարաբերակցության առանձնահատկություններն, անձնային կառույցների, հատկությունների և հոգեբանական պաշտպանական մեխանիզմների համահարաբերակցային առանձնահատկություններն, ինչպես նաև տարիքային

երկու փուլերում պաշտպանական մեխանիզմների կիրառման առանձնահատկությունները:

Անձի հոգեբանական պաշտպանական մեխանիզմների հիմնախնդիրը չափազանց ընդգրկուն է: Այդ մեխանիզմների բացահայտումն ու նկարագրությունը հոգեվերլուծության և, ընդհանրապես, անձի հոգեբանության լուրջ նվաճումներից մեկն է: Դրանց վերլուծությունը զգալիորեն խորացնում է մարդու հոգեկան կյանքի և մարդկային հարաբերությունների մոտիվացիայի իմացությունը:

Առկա հիմնահարցերի վերլուծությունն ու իմաստավորումը լույս կսփռի հիմնախնդրի վերաբերյալ մի շարք կնճռոտ երևույթների վրա:

Ատենախոսությունը ներառում է հիմնախնդրի վերաբերյալ գիտական գրականության բազմաթիվ հայեցակարգերի վերլուծություն, որով հիմնավորվում է հետազոտական մեթոդաբանական հենքը՝ /Ֆոն Բերտալանֆի, Բ. Ֆ. Լոմով, Բ. Գ. Անանևի կողմից մշակված համակարգային մոտեցում, պաշտպանական մեխանիզմների վերաբերյալ հոգեդինամիկ տեսություն, Է. Բեռնս, Վ. Ստոլին, Գ. Օլպորտ, Ա. Մասլոու, Կ. Ռոջերս/ և արդիականությունն առ այն, որ թեպետ հիմնախնդրի վերաբերյալ առկա մասնագիտական գրականության մեջ հաճախ է քննարկվում անձնավորության հոգեբանական պաշտպանական մեխանիզմների կատարած դրական կամ բացասական դերն, այնուամենայնիվ, դրա վերաբերյալ մինչ օրս էլ բացակայում է համապարփակ մոտեցումն ու միասնական ըմբռնումը, ինչպես նաև հոգեբանական պաշտպանական մեխանիզմների հետազոտության համար կիրառելի բավականաչափ համարժեք մեթոդիկաներ, ինչն էականորեն բարդացնում է դրանց ուսումնասիրությունը:

Ներկայացված հետազոտության արդիականությունը պայմանավորված է նաև նրանով, որ պաշտպանական մեխանիզմները կարող են հանդես գալ որպես ախտորոշման չափորոշիչներ:

Հոգեբանական պաշտպանությունն այսօր դիտարկվում է նաև հոգեկան առողջության տեսանկյունից, ինչի հաշվառմամբ էլ պայմանավորված է եղել ատենախոսի նպատակադրումը՝ այն է. բացահայտել հոգեբանական պաշտպանական մեխանիզմների և անձնային կառույցների հատկությունների համահարաբերակցության առանձնահատկություններն՝ անձի զարգացման տարբեր փուլերում, և առաջադրած վարկածն այն մասին, որ անձնավորության կողմից պաշտպանական մեխանիզմների ընտրությունը պայմանավորված է տարիքային տարբեր փուլերում նրա անձնային կառույցների և մի շարք բնութագրերի զարգացման մակարդակով:

Հետազոտության գիտական նորույթը որոշակի ներդրում է հոգեբանական գիտակարգում, քանի որ հետազոտության արդյունքում բացահայտվել են ինքնագիտակցության զարգացման մակարդակի և հոգեբանական պաշտպանական մեխանիզմների համահարաբերակցությունը, հասուն պաշտպանական մեխանիզմների ձևավորման հոգեբանական գործոնները, պաշտպանական

մեխանիզմների և անձնային հատկությունների փոխազդեցության օրինաչափությունները՝ տարիքային տարբեր փուլերում, ինչը հիմնավորվել է ատենախոսի կողմից իր առջև դրված խնդիրների նպատակամետ լուծման արդյունքում:

Մասնագիտական տեսանկյունից գրագետ է ձևակերպված ու համապատասխանաբար ընտրված հետազոտության ընտրանքն անձի զարգացման երկու խմբերում՝ «14-15» և «22-25» տարեկանների շրջանում: Հետազոտությունն իրականացվել է հուսալի մեթոդական գործիքակազմով, ինչն էլ ապացուցողական հենք է հանդիսանում ստացած տվյալների արժանահավատության համար: Մասնավորապես ֆունդամենտալ մեթոդական ապարատը, որն իր մեջ ներառել է ստանդարտացված՝ Ռ. Պլուտչիկի, Գ. Կելլերմանի և Հ.Ռ Կոնտեի «Կյանքի ոճի ինդեքսը (Life Style Index, LSI)», Վ. Վ. Ստոլինի և Ս. Ռ. Պանտիլեևի «Ինքնավերաբերմունքի հարցարանները», Ջ. Ռավենի «Աստիճանաբար բարդացող աղյուսակները», «Ինքնագնահատումը», Ն. Ն. Օբոզովայի «Կամքի ուժի ինքնագնահատում թեսթեր», Չ. Դ. Սպիլբերգերի և Յու. Խանինի «Իրավիճակային և անձնային տագնապայնության մակարդակի գնահատման սանդղակը», Ա. Բելովի «Խառնվածքային տիպի ուսումնասիրության», Կ. Ռոջերսի և Ռ. Դայմոնդի «Սոցիալ-հոգեբանական ադապտացվածության», Կ. Թոմասի «Անձի կոնֆլիկտային վարքագծի նախատրամադրվածության ախտորոշման», Վ. Մ. Ռուսալովի «Հուզականության ախտորոշում» մեթոդիկաները:

Հեղինակի կողմից հետազոտության արդյունքում դուրս բերված տվյալները ենթարկվել են համահարաբերակցային վերլուծության, իսկ քանակական վերլուծությունը կատարել է համակարգչային SPSS-15 և Microsoft Office Excel ծրագրերով: Տվյալների ազատության աստիճանը և կապերի հավաստիության գնահատումն իրականացվել է Կ. Պիրսոնի աղյուսակի միջոցով:

Ուսումնասիրության արդյունքների հավաստիությունն ապահովվել է հոգեբանական հետազոտություններին ներկայացվող պահանջներով, հիմնախնդրի տեսական համալիր վերլուծությամբ, ընտրված մեթոդաբանական սկզբունքներով, ատենախոսության նպատակին և խնդիրներին համապատասխան հոգեբանական գիտության և պրակտիկայի մեջ ընդունված մեթոդների և մեթոդիկաների կիրառությամբ, փորձարկվողների բավարար թվաքանակի ընտրությամբ, տվյալների մաթեմատիկական վիճակագրական մեթոդների մշակմամբ, ինչպես նաև քանակա-որակական համալիր հոգեբանական վերլուծությամբ:

Փաստենք նաև, որ եռափուլ մոդելով իրականացված հետազոտությունը հիմք է տվել ատենախոսին հիմնավորել առաջադրած գիտական վարկածը, պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, հանգել բավականին լուրջ եզրակացությունների, որոնք, ըստ էության, նոր խոսք ու էական ներդրում են հոգեբանական գիտակարգում:

Այնուամենայնիվ, առկա են որոշակի դիտարկումներ, որոնց մեկնաբանությունը ցանկալի է հնչեցնել ատենախոսի կողմից

Մասնավորապես՝

1. Հիմնավորման կարիք ունի ատենախոսի կողմից հետազոտության մեթոդների ընտրության սկզբունքը:

2. Ատենախոսության տեսամեթոդական հիմքում նշված է Բ. Գ. Անանևի անձի կառուցվածքի տեսությունը, սակայն աշխատանքում ներկայացված է միայն գծապատկերի տեսքով (էջ70): Աշխատանքը առավել կշահեր, եթե ներկայացվեր հեղինակի մեկնաբանությունները տեսության վերաբերյալ:

3. Ատենախոսության 78-80 էջերում հեղինակը մանրամասնորեն ներկայացրել է հետազոտության արդյունքների մաթեմատիկական-վիճակագրական մշակման մեթոդները, որը մեր կարծիքով ավելորդ է, քանի որ համահարաբերակցության ուսումնասիրությունը ենթադրում է տվյալ մեթոդների կիրառությունը:

4. Աշխատանքը բավականին կշահեր, եթե ուսումնասիրվեին նաև պաշտպանական մեխանիզմների և անձնային բնութագրերի փոխազդեցության սեռատարիքային առանձնահատկությունները:

Եզրակացություն

Հաշվի առնելով թեմայի այժմեականությունը, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, գիտական հավաստիությունն ու եզրահանգումների հիմնավորվածությունը, հավաստում ենք, որ Ռուզաննա Սլավիկի Ժամկոցյանի «Հոգեբանական պաշտպանական մեխանիզմների և անձնային որոշ բնութագրերի փոխհարաբերությունների դինամիկան՝ անձի հասունացման տարբեր փուլերում» ԺԹ.00.01. Հոգեբանության տեսություն և պատմություն մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը ավարտուն, կուռ կառուցվածքով, տրամաբանական փոխկապվածությամբ և գիտական խորը վերլուծության առկայությամբ աշխատանք է, որն էական ներդրում է հոգեբանական գիտակարգում և համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանավորման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և ԲՈՀ-ի կողմից՝ ԺԹ. 00.01. Հոգեբանության տեսություն և պատմություն մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության համար ներկայացվող պահանջներին:

Աշխատանքի վերաբերյալ կարծիքը և եզրակացությունները քննարկվել են ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի հոգեբանության ամբիոնի *2023 թվականի հունիսի 2-ի թիվ 6/23 նիստում:*

Քննարկմանը մասնակցում էին ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի հոգեբանության ամբիոնի վարիչ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Նաիրա Հակոբյանը, հոգեբանական գիտությունների դոկտոր Ռուբեն Նաղդյանը, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Վազգեն Պողոսյանը, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Մարիամ Մեհրաբյանը, հոգեբանական գիտությունների թեկնածու Մարիա Թնոսյանը, հոգեբանական գիտությունների թեկնածու Անժելիկա Այվազյանը, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Գոռ Եսայանը, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Նատալյա Գևորգյանը, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Աննա Խաչատրյանը:

ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ՝ Ն. ՀԱԿՈԲՅԱՆ

Ամբիոնի վարիչ Ն. Հակոբյանի ստորագրությունը հաստատում եմ

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտքարտուղար Մ. Սարգսյան